

1893

ԲԱՇՍԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ 70 ՓԵՏՐՈՒԱՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆԻՔԱ-ՊԱԻՂԻԿԵԱՆ ԹՈՆՐԱԿԵՑԻՈՑ ԱՂԱՆԴՆ  
ԵՒ ԳՐ. ՆԱ.ԲԵԿԱ.ՑԻՈՑ ԹՈՒՂԹԸ

**Ա**հՇջ եկեղեցի գնացէք, և քահանային խոստովանելու ժամանակն ձեր մեղքն մի' ասէք, որ չիմանան. այլ հասարակաբար խօսեցէք: 8. Միշտ եկեղեցի գնացէք, որ պայմինի թէ մեր ազգն իմանայ մեր այս գործը, այլ առ երես կատարեցէք ամեն ինչ, և այնքան ծածուկ կացէք, որ ժամանակ գտնողուք, և երե կարողացուք՝ բռոյրը դարձնեմք այս հաւատին վերայ: Եւ երգուա՞ք, որ թէ մեզ կտոր կտոր առնէին, չէինք պարտ յայտնել: Կաղղզվանցի Գրիգորն ասաց, թէ « Ահա ես խաչ, երկու ձեռքիս մոմ կպցըէք և երկրպագութիւն տուէք, թէ ես կարող եմ ձեզ փրկութիւն տալ, այնպէս էլ խաչն և սուրբքն »:

Աղ. Երիցեանն՝ այս և միւս խոստովանագրոց այնքան կարեռ թիւն չի տար, որքան « Բանալի ճշմարտութեան » գրութեանը. սակայն ըստ իս, — գէթ հետևեալ տեսակէտով, — այս խոստովանագրոց մէջ եղած վարդապետութիւնքն աւելի որոշ են, և հետևաբար ճիշտ, քան « Բանալի ճշմարտութեան » մէջ եղածներն. որովհետեւ սորա — մասնաւորապէս առաջինն, այն է կարապետ Մկրտչեանինը, — մահուան անկողնոյ մէջ դարձի եկող և զղացեալ սքահի մի անկեղծ խոստովանութիւնն է: Այս վերջին

խոստովանութեան գիրն՝ անով իսկ առաւելութիւն ունի քան զայլս, վասն զի նախ կը յիշատակէ յանուանէ այլ և այլ աղանդ-աւորս, որոց ոմանք Արխվէլցի, ոմանք կաղըզուանցի և ոմանք ալ Գիւմրեցի կամ Աղեքսանդրապօցի էին, և իրարու հետ գաղտ-անի ընկերութիւն մի կազմած էին։ Արդ՝ այս բանս յայտնի ապացոյց է, թէ չկար տարբերութիւն Արխվէլցի և Աղեքսան-դրապօցի աղանդաւորաց մէջ, որոնք Շուշու կալվինականներէն իրը թէ ներշնչուած ըլլան։ Բ. Անոր մէջ գրէժէ իրենց բնա-կան վիճակով և տգեղութեամբը մերկացուած են այն մոլորու-թիւններն, որոց վերայ « Բանալի ճշմարտութիւնն » ասուեր մի ձգած է, իրբև զվերարկու։ Մաս մի միայն դնենք հօս Արկրտչեանի խոստովանագրէն, որով ոչ միայն « Բանալի ճշմար-տութեան » վարդապետութիւններուն հետ ունեցած նմանու-թիւնն յայտնի պիտի ըլլայ, այլ նոյն իսկ վերջնոյս անջատուած տեղերն և հանգուցաւոր ասացուածները պիտի պարզուին և ամ-բողջանան։ « Արխվէլցի տիրացու Գէորգի քարոզելով, — կ'ըսէ նա, — Գիւմրցի կիրակոս Քոսարաբայեանը մոռացել էր սուրբ հաւատը, և ինձ կարապետիս՝ այն կիրակոսը քարոզեց, թէ Քրիստոս՝ Աստուած չէ։ Այս կիրակոսի քարոզելով Թարգի Սարգիսն իւր տամբ, Դիլբանդ Մանուկն, կաղրզվանցի Գրի-գորն իւր գերդաստաններ, Երկար Յակոբն, կաղրզվանցի Արօն և ես ժողովելով կաղրզվանցի Գրիգորի սենեակն՝ երդուանք 'ի միասին, որ մեր խորհուրդն ամենեին շյայտնեմք ումեք։ Մա-նաւանդ նոքա ինձ հաւատացրին, թէ, Ա. Քրիստոս Աստուած չէ։ Բ. Խաչին ինձ հայհոյել տուին՝ թէ ոչինչ է. — Գ. Նաև Հայոց մկրտութիւնն և մեռնը սուստ է. — Դ. Թէ կրկին պար-տիմք մկրտիլ, որ մեր ճակատիցն գաղանի մուհրն վեր գայ. — Ե. Ոչ դաւանին Աստուածածին կոյս, այլ ապականեալ. — Զ. Ոչ ընդունին զբարեխօսութիւն նորա, այլ և ինչքան սուրբ կայ չընդունին և ոչ նոցա բարեխօսութիւնը։ Է. Ոչ ընդունին զպատա-րագ և ոչ զշաղորդութիւն, և ոչ զխոստովանութիւն. այլ ասեն. Քա-րի, փայտի խոստովանիր և Աստուած ժողու. նաև ով կամի հա-ղորդիլ՝ նշխարն ուտեն և գինին վրէն խմեն։ իսկ պատարագի հա-ղորդութիւնը ոչ ընդունին. ասեն, թէ աշխարհիս վրայ ճշմարիտ Քրիստոնեայն միայն մենք ենք, իսկ Հայք, Ռուսք, Վրացիք և այլք սուստ Քրիստոնեայ են, կռապաշտ են։ Լ. Երեսն խաչ չեմք հա-նիլ. — Թ. Ծնրագրութիւն սուստ է։ Ժ. Զպահս ուտեն. — ԺԱ. Զկանոնագրութիւն սրբոց հայրապետաց չընդունին. ասեն. ժո-ղովն հայրապետաց սուստ է, սատանայի խորհրդով կանոնք են դրեալ»։

իսկ չորրորդ խոստովանութեան գրի հետևեալ կէտը միայն մէջ կը բերեմ, — բայ բանից Աղ. Երիցեանի. — « Գիւմրցի Սարգիս Յարութիւնեան աւելացնում է, թէ Արխվալցի տիրացու գէորգը, որի մօտ կայ մի ձեռագիր Բանալի ձշմարտուրեան, որի մէջ բոլորը գրած, ասում է եղել, թէ բոլոր քրիստոնեայք սուտ են՝ բաց 'ի Նեմեցները, որ ուղիղ քրիստոնեայ են :

Արդ՝ այս վկայութենէս իսկ ակներե կը տեսնուի նախ, թէ բոլոր վերոյիշեալ աղանդաւորաց վարդապեհութիւնքը գրուած / Դ էին նոյնպէս « Բանալի ճշմարտութեան » կոչուած գրքուկին մէջ. մանաւանդ թէ անկէց առնուած էին. Բ. Թէ Նեմեցները, այսինքն է կամ լուտերականք և կամ կալվինականք՝ ժամանակաւ անոր մէջ մատն ունեցած են. Սակայն պէտք է ըսել և այս, թէ Լջմիածնի Սինոդին մեզի ընծայած « Բանալի ճշմարտութեան » այժմ ամրողապէս նոյնը չէ, ինչ որ այն աղանդաւորերն ՚ի կիր արկանէին. այլ կամ մասամբ անոր վրայէն եղած ընդօրինակութիւն մ'է, զոր իրենց հարցաքննողաց բըռնութենէն ազատելու համար ներկայացուցին անոնց, խարելով գանոնք, թէ իրենց ունեցածն էր, յառաջագոյն իմանալով ըլլալիքը՝ մէջէն յապահեցին այն ծանրագոյն մոլորութիւնները, որք կարող էին զիրենք ծանր պատժոց ենթարկել. Բայց հանդերձ այսու կան կէտեր, որ Մ'կրտչեանի խոստովանութեան գրի մէջ եղածներուն քաջ կը համաձայնին. Օրինակի ազագաւ, ի. գլխուն մէջ, յէջ 80, Քրիստոս արարած համարուած է և ոչ արարիչ. և յէջ 104 որոշակի կ'ըսուի, — աղօթերով առ Աստուած, — « Արդ գթալովդ քոյ Աստուածութիւնդ արարեր զնոր մարդն Յիսուս », որ կը համապատասխանէ Մ'կրտչեանի խոստովանութեան Ա. նախադասութեանը. Ժ. գլխուն մէջ, յէջ 55, — Մ'կրտչեանի Բ. նախադասութեան համաձայն, — կը մեղադրէ զիսաշապաշտ ուղղափառ՝ իրեկ կոռապաշտ, ըսելով. « Հետևող հօրն ձերոյ շարի (սատանայի) զարծաթ և զոսկի ՚ի ձև պատկերի (այսինքն է խաչելութեան) առնել և երկիրպագանել. Մի և նոյն իջում կը մերժուի խորհուրդն խոստովանութեան և թողութիւն մեղաց պաշտօնէի ձեռքով, — Մ'կրտչեանի ի երորդ նախադասութեան համաձայն, — ըսելով. « Ո՞վ կարէ թողով զմեղս, եթէ ոչ մի Աստուած. Բ և Գ գլուխներուն մէջ, թէս կ'առաջարկէ 30 ամեայ մկրտել, բայց անոր բուն նպատակն է Մ'կրտութեան խորհուրդն եղածնել կամ Մ'անէսի մնքով ընդունել, — Մ'կրտչեանի Գ նախադասութեան համաձայն. — վասն զի մկրտուած երեխաները

« չար և որդի սատանայի », կանուանէ, և անոնց կնքահայրն ալ՝ « աւանակ » : ի . գլխում, յէջն 122, — Մկրտչեանի Ե . նախագասութեան համաձայն, — կը ժխտուի Տիրամօր Աստուածամյրութիւնն և կուսութիւնն՝ յետ ծննդեան, ըսելով . « Աւտարանիչք, և սրբազան Առաքեալք և Տէրն մեր Յիսուս Քրիստոս նախ քան զծնունդն Մարիամն՝ կոյս ասեն, և յետ ծնընդեան կին կոչեն, և զկուսութիւն նորա 'ի բաց բառնան » : ի . գլխուն մէջ, — յէջն 80, — կը մերժուի սրբոց բարեխօսութիւնն, այսպէս . « Հաւատայք դուք զբարեխօսութիւն Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ոչ այլոց » . որ կը համաձայնի Մկրտչեանի Զ . երորդ նախագասութեանը . Ա . գլխուն մէջ, յէջ 5-9, և մասնաւորապէս թ գլխում, յէջն 27-29, մերժուած է, — Մկրտչեանի ԺԱ երորդ նախագասութեան համաձայն, — սուրբ Հայրապետաց և ժողովոց օրէնսդրութեան վաւերականութիւնն, ըսելով . « Զարն եղե 'ի կերպ եպիսկոպոսաց և կաթողիկոսաց ... զի նորա ևն տնօրինողը սուր օրինաց, և ևս են ագահ և սուր իրաց հանձարողք » : Պահոց վարդապետութիւնը, — որ Ե գլխուն մէջ կը գտնուի, յէջ 19-22, — եղծեալ և թերի է . ուսկից նպաստաւոր կամ աննպաստ բան չերեիր . սակայն ինձ կ'երեի, թէ հայրապետաց օրէնսդրութեան հետ, — զոր տեսանկը թ գլխում, — պահքն և ծնրադրութիւնն իսկ Մկրտչեանի թ . և Ժ . նախագասութեանց համաձայն մերժուած են :

Արդ՝ այս բազդասութենէս ամենաորոշ կերպով կը տեսնուի խոստովանութեան գրոց և « Բանալի ճշմարտութեան » մէջ պարունակուած վարդապետութեանց նոյնութիւնը . ուրեմն այժմ մեզ ուրիշ բան չի մնար, բայց եթէ ներքին փաստերով ապացուցանել, թէ « Բանալի ճշմարտութեան » վարդապետառութեան մի մասը՝ Մանկեցւոցմէ փոխ առնուած է, և միւսն ալ 'ի կալվինականաց և 'ի լուտերականաց . և հետեարար, թէ վերոյիշեալ աղանդաւորներն ընդհանուր առմամք Թոնրակեան չէին, այլ նորակրօն Մանկեցիներ, կամ լաւ ևս Մանիքէա-կալորշնաւկանը կամ Լուտերականներ, զորս Մասոն ևս անուանելու իրաւունք ունինք, ինչպէս իրենք ալ ձկտում մ'ունէին առ այն : Այս բանս կ'երեւի Ալու Մարտիրոսեանի խոստովանագրոց գըծուած տողերէն, որոնք կը յայտնեն մեզ անոնց նպաստակակէտը :

Ա . Մ'ենք նախնաբար տեսանկը, որ Թոնրակեանկը կը ժխտէին բացէ 'ի բաց բոլոր եկեղեցւոյ Խորհուրդներն . իսկ Մանկեցիք՝ գէթ ըստ արարողական մասին, կամ արտաքին ձեռվ ոչ միայն ընդունած, այլ նոյն իսկ կը կատարէին զայնս : Արդ՝ մենք կը տեսնենք « Բանալի ճշմարտութեան » մէջ, — ի . գլ . էջ 184, —

որ իբրև Քրիստոսի պատուէր, — 'ի մէջ այլոց, — ընդունուած և հարկաւոր<sup>(1)</sup> համարուած են առ կրիութիւն « Ապայիսարութիւն, Մկրտորդիւնն և Հաղորդորդիւն առշրմ » :

Բ. Թոնրակեանք՝ ոչ միայն չէին ճանչնար զգէրն մեր թիսուս Քրիստոս իբրև Աստուած, այլ և ոչ իսկ Տէր և միջնորդ. իսկ Մանկեցիք, — ըստ 24երորդ և ծրորդ նախադասութեանց, — կը ճանչնային զհոգին թիսուսի կամ զբանն իբրև մասն Աստուածոյ, և զնախամարդն Յիսուս իբրև պատերազմող ընդդէմ խաւարին և միջնորդ բարութեան։ Արդ՝ « Բանալի ճշմարտութեանն » համաձայն վերջոցս կ'ընդունի, — ի. գլ. էջ 80, 103—4, և 425, — գէթ իբրև մարդ զթիսուս՝ միջնորդ, բարեխօս և Տէր մարդկութեան։

Գ. Թոնրակեանք ոչ միայն կը մերդէին Երբորդութեան գոյութիւնն, այլ նոյն իսկ գերարուն էակին Աստուածոյ և աստուածապայտութեան գաղափարն ևս իսպառ բարձած էին 'ի միջոյ, — բանիւ և գործով. — իսկ Մանկեցիք, ընդհակառակն, կը հաւատային Աստուածոյ իբրև բարւոյ արարչի, և կ'ընդունէին երիս անձինս, թէպէտ և իբարմէ մեծ և փոքր և իբարու ստորակարգեալ։ Արդ՝ « Բանալի ճշմարտութեան » գրութեան մէջ, — ի գլ. 80, 84—103 էջներում, — երկու մասունքն ևս ընդունուած են՝ գեռ աւելի որոշ կերպով<sup>(2)</sup>։

Դ. Բառեցաւ, թէ Թոնրակեանք կ'ուրանային զհանդերձեալ կեանս և զպատիժ մեղաց. իսկ Մանկեցիք, ընդհակառակն, երկուքն ալ կ'ընդունէին, — գէթ ըստ պահանջելոյ ընական օրինաց և վախճանի արարչագործութեան։ Այսպէս նաև « Բանալի ճշմարտութեան » մէջ, — ի. գլ. էջ 134, — նախ ընդունուած է մեղաց վարդապետութիւնն այսպէս. « Հց. Ակա որսց է արժան մկրտութիւն և Հաղորդութիւն։ Պ. Նոցա, որք ունեին զմենս սկզբնական և ներգործական »։ իսկ նոյն գլխուն մէջ, յէջ 144 կ'ըսուի վասն դատաստանի. « Դատաստան Աստործոյ վասն մեռելոց և կենդանեաց մի է ». և Ժէ գլխում, յէջ 65 վասն արքայութեան. « Որք ոչ ունիցին զիւաւասն . . . ոչ կարեն մուտանել յարքայութիւն Աստուածոյ։ Այս իսկ դիտելու ենք, որ այս դրութեանս մէջ ընդհանուր կերպով, — բայց մասնաւորա-

1. Այս գաւանութեանս մէջ, — դիտելու ենք, — Մանկեցւոցմէ աւելի Լուտերականաց ազդեցութիւնն զգալի է, առ այս ընդունուած են այս խորհուրդը։

2 Զի կ'ըսուի այսպէս վասն Աստուածոյ, « Խոստովանիմէ և հաւատամք զԱստուած մի ճշմարիտ գուլ։ իսկ Երրորդութեան համար. « Երկրպագեմ զ Հայրն՝ Աստուած, և զԱրդին՝ զմիջնորդ և բարեխօս, և զսուրբ Հոգին՝ բաշխող չնորհաց »

պէս ԺԵ գլխուն մէջ, յէջ 68, — ոչ միայն Թօննրակեանց անբարոյականութիւնն և մեղանչական գործերը խստիւ արգիլուած են, այլ նոյն իսկ Հաւատոյ, Յուսոյ և Սիրոյ հետ՝ միւս առաքինութիւններն ևս պատուիրուած են, զոր Մանի իսկ կարեւոր կը համարէր, լուսաւոր մասը խաւարի իշխանութենէն, կամ նիւթէն, ազատելու համար:

Այժմ մատնանիշ ընենք այն կէտերը՝ զորս 'ի Մանկեցւոց առած չեն կարող լինել, այլ 'ի լուտերականաց կամ 'ի կալվինականաց, զի այնպիսի պարագայից և ձկտմանց կից են, որոնք Մանկեցւոց ժամանակ չկային:

Ա. Անոնց զառլրբ կոյսն Մարիամ, — յետ ծնանելոյն զթիսուս, — իբրև սոսկական կին մի, և ոչ ևս կոյս անուանելն: Բ. Առլրբ Աստուածածնի և այլ սրբոց բարեխօսութիւնը մերժելն: Գ. Զխորհուրդոց Եկեղեցւոյ, այսինքն է Դրոշմ, կարգ քահանայուրեան, վերջին Օճուշմը կամ իւղն հիւանդաց և Պասկն, իբրև անպէտ և աւելորդ մերժելը: Դ. Եկեղեցիէն օրինադրուած պահքն և այլ ապաշխարանս չընդունելն: Ե. Առաջնորդին և երիցանց ընտրութիւնն և կարծեցեալ Ձեռնադրութիւնն, որ բոլորվին աշխարհական է, և իշխանաց և ժողովրդեան ձեռքը տրուած է: Զ. Բառնան 'ի քահանայից, կամ պաշտօնէէն Աստուծոյ, զիշխանութիւն՝ թողլոյ զմեղս: Է. Խտրութիւն չդնելը Սարկաւագի, Քահանայի, Եպիսկոպոսի և այլ հոգեոր աստիճանաց մէջ, այլ հարթ հաւասար համարել զանոնք: Ը. Զընդունելն Եկեղեցւոյ անսխալականութեան վարդապետութիւնն և անոր գլխոյն գերիշխանութիւնը: Թ. Առ ոչինչ համարելն սուրբ ժողովոց և սրբոց Հարց օրէնսդրութիւններն և միաձայն վկայութիւնքը: Ժ. Բաղրոր ուղղափառ Եկեղեցւոյ պետերն, այսինքն է « պապը, կաթողիկոսն և առաջնորդս » ընդ « գերաքըրիստոսի » դասելն, և այլ նման կէտեր:

« Բանալի ճշմարտութեան » հեղինակը կը ծանուցանէ, իր Յառաջաբանին մէջ, թէ այն գրութիւնը շարադրելու շարժառիթներէն մին ալ էր « աղայանք բազեաց հաշտացելոց », այսինքն է աղանդակցաց: Իսկ վերջարանին մէջ, — որ գժբաղդաբար թերստ է, — անոնցմէ ոմանց անուանքն ևս յիշատակած էր, ըսելով. « Ամենասպայծառ Յովհաննէսին վահագունոյն... Քանզի սոքա մեծաւ ջերմեռանդութեամբ ինդրեցին 'ի մէնջ »:

Արդ՝ այս կրկին տեղեացմէ, — թէպէտև պակասաւոր, — կը տեսնուի, թէ այն գրութեան ժամանակամիջոցին, այն է 1782, մանաւանդ թէ յառաջ իսկ եղած ըլլան, — խնուսայ, Բուլանըին և Մանազկերտի գաւառներուն մէջ, — բազմաթիւ հայ աղան-

գաւորներ, որք մահմէտականացած Մանիքեցիներ դարձած էին։ Յիրաւի, այսպիսի տիտուր եղելութեան շատ մանրամասնութիւններ կ'աւանդէ մեզ մեր Ռւխտակից Հ. Պօղոս վ. Մէնէրեանն իր կենսագրական պատմութեան<sup>(1)</sup> մէջ։ Նա կը պատմէ, — յէջ 120, թէ 'ի Բերիոյ 'ի կարին ճանապարհորդած ժամանակ, — յամին 1773, — քրդաբնակ գիւղի մի մէջ հանդիպեցաւ Հայերու, որոնք ուրացեալ էին իրենց սուրբ հաւատքն, և « աղանդաւորք էին իրեւ զԹոնրակեցիս, կամ կէսկէս էին, և կամ Արևորդիք »։ Առա առանձին խումբեր կազմած, աւազակութիւններ ալ կ'ընէին, ինչպէս իրեն իշխանած գիւղն իսկ այն գիշերը 50 ձիւորգք պաշարեցին և հարստահարեցին։ Եւ Հ. Պօղոսի Քիւրդ ընկերակցին ըսածին նայելով, նորա ոխերիմ թշնամի էին միայն Քրդաց . « Քանդի նորա ոչ միայն զփողս մեր առնէին և գերիվարս, այլ և սպանանէին զմեզ, զի թշնամիք մեր են. բայց դու հայ լինելով ոչ ինչ առնէին կենաց քոց »։ Խէվակ գիւղին մէջ 200 թուրքացած հայ ընտանիքներ կը յիշէ։

Իսկ գալով Յովհաննէս անուան, որուն ինդրանօք գրուած է « Բանալի ճշմարտութեան », դարձեալ նոյն Հ. Պօղոս Մէհէրեանի պատմութեան մէջ կ'աւանդութիւն երկու միջագէպք, որոնց մով փոքր 'ի շատէ կը պարզուի վերջին ժամանակի Թոնրակեցաց պատմութեան սկզբնաւորութիւնն։ Հեղինակս կը պատմէ նախ, թէ Բոռձիմատորի վանաց մէջ Յովհաննէս անուամբ առաջնորդ մի կար, որ ստութեամբ եպիսկոպոս ձեանալով 14 քահանաներ ձեռնադրած էր, և կարնոյ կողմերը մեծ շփոթութիւն հանած . որ յետոյ հալածուելով 'ի Հայոց՝ փախաւ 'ի կողմանս Մանազկերտի, և կը շրջէր 'ի գիւղօրէս։

Բ. Կը պատմէ, թէ Զաքարիա Պատրիարքին և կախողիկեայ Հայոց գէմ՝ յարուցած հալածանքի ժամանակ, — այն է յամի Տեառն 1774-1784, — Մշց կողմերէն 'ի կ. Պօղիս եկող նորադարձ հայազգի մէկն, որ Յովհաննէս կ'անուանէր, երկիցս ուրացաւ զքրիստոնէութիւնն . նա ինքն կրօնական անուուր մոլորութեանց հետ՝ քաղաքական ժանր յանցանք ևս գործելով, ուժ ամիս արգելանաց և թիավարութեան դատապարտեցաւ . բայց յետոյ Պատրիարքին ձեռքով ազատուելով, գնաց 'ի կողմանս խնուսայ, ուր ապա նորահնար աղանդ մի հնարելով, սկսաւ Խընուսի և շրջակայ գիւղօրէից և գաւառաց բնակիչները խռու-

1. Այս անտիպ գրութիւնս, որ այժմ կը գտնուի մեր Զեռագրատան մէջ, շատ և շատ հետաքրքրական և կարևոր նիւթեր կը պարունակէ ժամանակակից պատմութեան և Հայոց յանձնամու կացութեան վերայ։

ըեցնել 'ի քրիստոնէական սուրբ հաւատոց · որուն համար կը րկին անգամ շղթայակապ եղած 'ի Հայոց դրկուեցաւ յէջմիածին :

Սակայն հօս կարևոր կը համարիմ, բոլոր իր մանր պարագաներովը մէջ բերել Մէջէրեանի մեզ աւանդած յիշատակարանը, որ պատմելով յիշեալ Յովհաննէսի Մուշէն 'ի կ. Պոլիս գալն, — անտի 'ի վենետիկ 'ի վանս երթալն, — և քիչ օրէն իրբե դիւամոլ և մոլորամիտ վոնտուիլն 'ի կ. Պօլիս, — թէյ-օվլիի . մէջ ուղղափառ աղջրկոյ մի հետ ամուսնանալն, — այլազգութեան գառնալն, — անուանափոխ ըլլալն և գործած չարութիւնքն Հայ կաթողիկեայց գէմ, և այն, — կը ըսէ . « իսկ թէ շար և անօրէն պտղող Ապտուշան յետ այսորիկ զիարդ աղանդաւոր եղն, և զամենայն հաւատու և զաղանդօ և զմանապս արհամարհէր, պատմեցից ճշմարտապէս...: Մինչ քրիստոնեայն էր Ապտուշան՝ ամուսնացաւ ուղղափառապէս. և յորժամ ուրացաւ և՛ գնայր առ կին իւր 'ի Բէյօղի յամենայն աւուր: Բայց եթող զկին իւր և չոգաւ 'ի կարին և անտի 'ի Մուշ առրեաշին Մշց, և ասաց ցնա. Գիտաշիր զի եռ Հայ էի և թուրքացայ. բայց այժմ կամիմ Հայ լինել: Եւ բարկացեալ բգեշխին՝ առաքեաց առ մօլայս իւր, զի ուսուացեն նմա զտածկութիւն: Եւ յետ երկուց առուրց ծնլայք ծանուցին բգեշխին, թէ նա ուսուցանէ մեզ զտածկութիւն, զոր մեք ոչ գիտեմք: Եթող զՄուշ և եկն 'ի խնորդ, և ծանոյց գատաւորին թէ ես կամիմ Հայ լինել. իսկ գատաւորն Խնորսայ հրամայեաց նմա, թէ երթ լեր Հայ: Եւ նա չոքաւ 'ի գիւղն Մարուխն և ամուսնացաւ: Յետ ամուսնանալոյն չոգաւ առ գատաւորն գաւառին, և ասէ ցնա. կամիմ քահանայ ձեռնադրիլ, բայց ոչ ձեռնադրեն, թէ թուրքացեալ եօ: իսկ գատաւորն առաքեաց զսպասաւորս իւր 'ի կորայ վանս, որ է 'ի Բուղանուխն կից ընդ Մանազկերտ գաւառին, ուր էր եպիսկոպոս մի, զոր բռնութեամբ բերին 'ի Խնորս 'ի գիւղն Մարուխն, և ետուն զուրացողն ձեռնադրել քահանայ: Յետ այսորիկ սկսաց աղանդ չար սերմանել 'ի գիւղն Մարուխն և յայլ գաւառս, զոր Հայը ծանուցին Ղորկաս կաթողիկոսին, որ և կալաւ զյարանճիկն, և տարեալ յէջմիածին, եղին 'ի բանտի, ուր եկաց մնաց ժամանակ ինչ. ապա զքուրձ իւր հատեալ՝ փոկ արար իրբե զպարան, և նովաւ էջ 'ի պարսպէն, փախեաւ 'ի գիշերի միոյ: Եւ 'ի յանցանեն զլեառն ինչ, չունք հովուաց գիմեցին 'ի վերայ նորա. իսկ հովիւք՝ համարելով, թէ գող իցէ, կալան ցնա, և տեսին զի չէր գող. և իմացան, թէ փախուցեալ է. աորին վասն կալան ցնա: իսկ ընդ լուսանալն եկին ինդրակք կաթողիկոսին, կալան կապեցին 'ի վերայ գրաս-

տուն՝ տանէին յէջմիածին։ իսկ ուրացեալն աղաչէր զնոսա արձակել, զի 'ի պէտս նստցի։ Եւ 'ի յարձակելն նոցա փախեաւ 'ի մէջ թփոց եղեգանց և մացառախիտ լերանց, և եկն վերըստին 'ի խնուս 'ի գիւղն Մարուխ, և սկսաց տարածել զրիշն իշր։ Բայց մինչ գաւառապետ պաշտպան իւր սփսորեցաւ 'ի խընուսայ 'ի կարին, և ինքն չարաճճին երկեաւ մնալ 'ի խնուս, առեալ զկին իւր և զորդիս չոքաւ 'ի կարին։ բայց Հայք ոչ ընդունեցին զնա և ոչ յեկեղեցիս իւրեանց թողին մտանել։ Այլ սակայն մինչ գլխատեցին զպաշտպան իւր գաւառապետն խնուսայ, յայնժամ մահմէտականք կալան զնա, յամին 1804, և ասեն ցնա, թէ թուրք ես գու և թուրքացեալ։ և զիա՞րդ Տէրտէր եղեր։ Պատասխանի ետ նոցա, թէ զի՞ բանագատէք զիս, վերըստին թուրքանամ և թուրքացուցանեմ զորդիս իմ։ և եղեւ զոր ասաց որդին կորստեան։ Բայց կինն ոչ թուրքացաւ, այլ բաժանեցաւ 'ի նմանէ, և գնաց ընդ հօր իւրում 'ի խնուս։

Արդ այս յիշատակարանով՝ խնդիրը բոլորվին պարզուած համարելու է, և այլ ևս չենք տարակուսիր եղրակացնել, թէ ստուգիւ « Բանալի ճշմարտութեան » գրութեան հեղինակն՝ այս չքահանայ Յովհաննէսն եղած է, զոր Սինոգի գործերէն մին քահանայ կ'անուանէ զնա և տաճկացեալ։ Ժամանակն և բոլոր միւս պարագայք իսկ զայս կը հաստատեն։ Բայց թէ այն գըրքոյկը գրել տուող « ամենապայծառ Յովհաննէս Վահագունին » արդեօք նախայիշեալ ստանուն եպիսկոպոնն է, թէ ընդհակառակն խնուսի դատաւորը, այս կէտերս Կտակաւին մութ են մեզ համար, թէպէտե վերջինն աւելի, հաւանական կ'երեսի, ենթադրելով որ զՅովհաննէս-Ապտուղլահը ձեռնագրել առողջն և իւրախուսողը, բուրքացան հայ-Մանիքեցի մի պէտք է որ եղած ըլլար։ ապա թէ ոչ տաճիկ մի չէր կընար գիւրաւ հրաման տալ տաճկացած Ապտուղլահին, որ վերատին հայանայ։ Երկրորդ անոր ամբաստանուին և մահուան դատապարտին իսկ՝ Ապտուղլահի և Հայոց մէջ ծագած մեծ շփոթութեան մի պատճառաւ թերևս եղած ըլլայ, զոր Հայք ամբաստանած էին իրքն յանցաւոր յօրէնս Ծաճկաց։ Նախընթացին հետ՝ այս վերջին կէտերուս մասնին իսկ ընելիք նորանոր յայսնութիւնները՝ կը թողունք Էջմիածնի ուսումնատենչ միաբաններուն, մանաւանդ թէ կը սպասենք անհամբեր։ զի ունին ամենահարուստ դիւան մի նաև այս ժամանակի անցից և պատմութեան։

Այստեղ ստիպուած ենք, վերջացնել Մանիքէա-Պաւղիկեան թոնրակեցւոց աղանդի ուսումնասիրութիւնը, թողով ուրիշներուն այն բազմուստեան բազմակնճիռ հարցը, թէ ի՞նչպէս տա-

բածուեցաւ այս աղանդս յԱրևելից<sup>(1)</sup> յԱրևմուտս, — կամ ընդհակառակն, — և ծագումն տուաւ կարարացցոց, Բուզզար աղանդաւորաց, Բոգոմիլներուն և Այրիգացցոց. և դարձնել ընթերցափրաց ուշադրութիւնն ուղղակի Գր. Նարեկացւոյ թղթին վրայ, զոր կ'ընծայենք 'ի վայելս ուսումնասիրաց:

1. Ոմանք արդի յԵրոպացի մատենագրաց Հանացին պաշտպանել, ընդհակառակն, թէ ոչ եթէ Արևելքէն՝ յԱրևմուտս, այլ Արևմուտքէն, — այսինքն է Հարաւային Գաղղիայէն Այրիժուաներ տարածեցին թիրենց աղանդը Բուզզարաց, / Դաղմատից և ուրիշ արևելեան երկիրներու մէջ: Սակայն դիտելու ենք, որ նախքառոս Bougare, — որ Bulgare, անուան կրնատումն է, — Այրիժուաներուն մէջ պահւած է, որ զհակառակն ենթադրել կու տայ: Երկրորդ, Բուզզար աղանդաւորաց հնութիւնը մինչև ԺԱ դարը կը հաւնի, մինչդեռ Այրիժուաներունը համեմատաբար նոր է: Մերաց մեծանուն եպիսկոպոսը Բոսիէ, Յայունուրեան Մեկնութեանը մէջ, — ի. 7, — առաջին կարծեաց աւելի նպաստաւոր կ'երեկի, յասելն. «Pour mieux porter le caractère de Gog, ils (Մանիքեցիք ԺԱ դարու) étaient originaires de la Gogarenne, province d'Arménie, où ils s'étaient cantonnés; et ils venaient des Bulgares, nation scythique, dont on sait que Magog a été la source ».



## ԹՈՒՂԹ'

« Ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեաց՝ ի հոյակապ Աւիստն կնաւայ<sup>2</sup>, վասն կարծեացն անիծնոց թոնրակեամնց Յանիէսի եւ Յամրէսի, որ եկն զգեստի ոչխարաց, եւ ՚ի ներքոյ գայլ յափշտակող, որ եւ ՚ի պտղոյ ծանուցաւ ամենից, զոր սուլըր վարդապետին լուեալ գրեաց սակս ազատութեան<sup>3</sup> ՚ի չար կարծեացն »։

1. Որ կը գտնուի « Թղրոց Գրքին » մէջ. ուսկից ապա գաղափարեց բարեյիշատակ Հ. Բառնարաս Վ. մեր Էսայեան, յամին 1851 Հոռմ եղած ժամանակ, և բերաւ ՚ի վանս. իսկ բնագիրն « Թղթոց Գրքին », — որ այն ժամանակ Անտոփեան Հարց Մատենադարանին մէջ կը գտնուէր և այժմ չզիտեմ ուր, — գրուած է ՚ի Հռոմէլայ, ՚ի Թուին Հայոց Զիթ, — այսինքն է Հռոմէլայի առնուելէն քիչ ետքը, — Հռոմէլայի թովինաս քահանայի ձեռքով. որուն նշանաւոր Յիշատակագիրն կը գտնուի մատենին վերջ, բայց ՚ի վերջոյն թերի: Հօն կը պատմէ յիշատակագիրն Հռոմէլայի պաշարումն, առումն և Հայոց քաջաց կոտորածը: Զեռագիրն է բոլորգիր՝ բամբակեայ թղթի վրայ գրուած:

Նախկին օրինակն կամ բնագիր գրչացին թովմայի եղած էր Գրիգորիսի վկայափրիննե, և կը հասնէր ցէջն 175, որ Կայ և Հայրապետին Յիշատակագիրն այսպէս: Զվահերամ որդի Գրիգորոց Մագիստրոսի յիշեսչից յաղաքրս ճեր, ոչ երշանիկ դասը ուղղափառաց խմբիցից ասքանազեան սեպի. Շնիլ. բռչականիս ո.

2. Տասներորդ գարուն մէջ հոյական հոչակուած այս վանքիս անունը՝ գրէթէ ազգային մատենագիրը առ հասարակ ՚ի մոռացութեան թողած են, — չփիտեմ ինչպէս: Հռոմիսիմեանց Պատմութեան հեղինակը միայն կը յիշէ զայն, իր հնագոյն արարուածովն ի միասին, այսպէս « Եւ անտի փոխին, և գնացեալ ՚ի գաւառն Մոկաց, Սուրբ-Խաչ հոչեցեալ տեղի, որ և մեծ պանչեխս կատարեաց Աստուած՝ ՚ի ձեռն նոցա պատուական խաչին լսայեայ և Դանիելի, որում ես և դու հասու, և մեզ երկրորդել զի՞ կմատն կոչեցեալ տեղի՝ դիաց լեւալ պաշտամամբ, հասեալ անդ առաքելանման քահանայիցն և սրբոց կուսոնացն, զընդդիմամուրտն արգելուին զգիտցն. յորում զարդարնեալ դիւացն՝ զիմեալ ՚ի վերայ խեղէին, ծոէջն, պնչատէին զպաշտուեայս իւրեանց... վասն որոյ և տեղին կոշեցաւ կմաւ, որ և յետոյ զտեղին հաստատէ վանս սուրբն Գրիգոր »: Երզնկացին ևս մէջ կը բերէ այս տեղիս (Տես ՚ի Տօնապատճառն, 981) առանց նորութեան, ըսելով. « Վասն որոյ տեղին կոչի կմաւ (իրը) թէ ՚ի յայսմ տեղուշ կմատէին դեկն զմարդիկ »: Թէ՛ Երզնկացին և թէ՛ իր նախորդն ուղած են կմաւ անունը կծել և կմաւ կմատէ բայէն յառաջ բերել. բայց ՚ի զուր. զի կմատէ բայս իսկ բացառութիւն կը կազմէ մեր լեզուի և բառարաններու մէջ: Ուստի կամ կրմատ ուղղագրելու է կմաւն, և կմամ կրմատէ բայէն ծագած ըլլալու է: Եւ իրօք Հռիփսիմեանց Պատմութեան, Լվմիամնի Օրինակին մէջ « կրմատ » գրուած է, այսպէս: « Մասպէս և ՚ի կրմատն կոչեցեալ տեղի դիւաց »: Այս վանքս կը գտնուէր Մոկաց գաւառին մէջ, և անշուշտ իր հնութեան համար համբաւաւոր կը համարածի աստ:

3. Դիտելու ենք, որ յամի Տեսառն 987 ժամանակամիջոցը կը յիշեցնէ մեզ,

« **S**էր Հայր՝, զոր գրեմն, իբր չհաւատալի համբաւ՝ շար տե-  
» ղեկութեամբ, զի թէպէտե յրոց լուանն հաւատարիմ կարծէին,  
» և չէր ինչ խէթ կարծեաց քինիւ՝ ոչ այլ իմն ունի կերպարան  
» հակաճառութեան. քանզի լուայ, թէ յանցիշելի ամենազպիր  
» մծղնէութիւն աղանդաւորութեան անիծելոց թոնրակեանցդ  
» 'ի միջի ձերում բարեխորհիցդ յիշատակի<sup>9</sup>. և հիացայ զար-  
» մացայ ընդ այդպիսի անյարմար երեսս<sup>3</sup> բանի՝ Աստուծոյ ա-  
» տելեացդ, որ ասեն զգէնջ ասել առաւել զայդ գիտնական ա-  
» նուն Մուշեղայդ<sup>4</sup>, թէ Ծեղեկացեալ եմք 'ի մերմէ առաքեալ

յորում կեղծաւոր Թոնրակեցւոց աղանդին պատճառաւ և աղանդաւորաց մէջ՝  
սրբառնկքն անգամ 'ի Հարս վանորէից ամբաստանութեցան իբրև անոնց համա-  
խոհներ։ Ասոնց մէջ էր և սուրբն Գրիգոր, զոր թշնամիք նշայր կ'անուանէին,  
այն է ուրացեալ 'ի հաւատոց։ Այս բանս քննելու համար, նշանաւոր վարդապե-  
տաց և իշխանաց ժողով մ'եղան 'ի թագաւորանիստն Անի, ուր և Գրիգոր ար-  
դարացաւ Բայց որովհետեւ ամենուն ծանօթ չէր իր տննեղութիւնն, անոր համար  
ստիպեցաւ ասոր անոր թուղթեր ալ զրել, թէն այս թուղթս անձնական ջատա-  
գովութիւն շերմիր։

1. Հօս յիշուած «Տէր Հայրը» Լճաւ կամ Կրնատն վանքի վանահայրն է. ոա-  
կայն դժբաղդաբար ինչպէս յիշեալ վանքին, այսպէս և անոր վանահայրերու մա-  
սին տեղեկութիւնք մեզ հասած չեն. հետևաբար չենք կրնար ըսել, թէ ով և  
ինչպիսի մէկն էր. թէպէտե Ա. Գրիգոր անոր վերայ մեծ համարումն կը ցուցը-  
նէ այլ և այլ տեղեր, բայց ոչ առանց կասկածի։ Այս վանահօրս վերայ ևս ամ-  
բաստանութիւնք եղած էին, և մինչև Գրիգորի առանձնարանին մէջ տարածուած.  
որոնց թէպէտե սուրբ վարդապետը չէր ուղեր հաւատալ, բայց իր, — և իրմէ ա-  
ւելի՛ իրեններուն, — զայթ՝ կղութիւնն ուղղելու համար զրեց անորիայս նամակս,  
յորդորական բանիւ։

2. Որչափ որ մեղմորէն բացասրութեամբ և յիշատակի ո գրած է Գրիգոր, իր  
մուերիմ բարեկամը շխովելու համար, սակայն կ'երևէ, թէ կամ այն վանքի  
միաբաններէն իսկ ստուգիւ Թոնրակեանց թակարդին մէջ ինկողոններ եղած էին,  
բարեմտութեամբ. և կամ, — ինչպէս Նարեկացւոյն հետագայ խօսքերէն կը  
տեսնուի, — այն աղանդաւորներէն ումանք շարութեամբ այս տեղեկութիւնս տուած  
էին Գրիգորի, որպէս զի զի՞ւն ևս վաստկին։

3. Դիտելու ենք, որ Գրիգոր այս ասութեամբ, միտք կամ կարծիք կը հասկնայ.

4. Այս Մուշեղի յիշատակութիւնն առաջին անգամ կը գտնենք Նարեկացւոյ-  
քով միայն, — իբրև Թոնրակեան աղանդաւորի, — որ գիտնական անուն իսկ  
ժառանգած էր իր ժամանակակիցներսւն առջև. այս տեղեկութեանս համար  
յոյժ նորհապարտ ենք Գրիգորի, բայց թէ ով էր այն, աշխարհիկ ոք և տոհմիկ,  
թէ ընդ հակառակն եկեղեցական, այս յայտնի չէ։ Սակայն ժամանակն և ժա-  
մանակակից գէպէտերն 'ի նկատի ունենով, շատ հաւատական է, որ կարուց իշ-  
խեցողն Մուշեղ թագրառունի Արաւականը ըլլայ. որ ըստ վկայութեան Ասողկայ. —  
Գ. 11 և 12, — յամի Ծեառն 984 պատերազմ՝ իսկ բացաւ իր հօրեղբար Աըմ.

» թղթաբերէ, որ չեն նոքա աւտար յառաքելաւանդ դաւանու-  
» թենէ. և ըղձալ բաղձաւ մեծաւ փափագանակք հաւասարիլ  
» մասին նոցա, և խառնիլ յարեան ընդ կոտորեալսն 'ի սրոյ  
» վրէժինդիր հեթանոս Ամիրային Ապլ-Վարդայ<sup>1</sup>. որ արդարե  
» գաւազան սրտմութեան 'ի ձեռին Տեառն Յիսուսի. և թէ  
» յո՞ր գիրս հրամայէ նորվել զոք, և զերջանիկ տեառն մերոյ  
» Անանիայի զգարմանազիծ հակաճառութիւն նամակին, զրա-  
» բանականս ասել<sup>2</sup>, կամ անպատեհս, կամ ոչ Աստուծով խաւ-  
» սեցեալ. Արդ եթէ այդգիր ազդեցան 'ի ձէնջ, թողում ա-  
» սել թէ հաւանեցան, և անխայեմ գրել թէ ճաշակեցան, ապա  
» գլխաւորեցաւ առ ձեզ նախագրեալն, թէ կերակուրք նոցա  
» ընտիրք՝ զազրացան:

» Բաղրում ինչ ասուուածային և առաքելական, ամինայն ինչ  
» ուրացեալ է 'ի նոցանէ<sup>3</sup> և խափանեալ յաստուածային կար-  
» դաց: Զեռնադրութիւնն, զոր Առաքեալքն 'ի Քրիստոսէ ըն-  
» կալան: Եւ Հաղորդութիւն մարմոյ նորա, զոր ասաց Առա-  
» քեալ, եթէ Զհացն<sup>4</sup> Հաղորդութեան ճաշակելով, զնոյն ինքն

բատայ Տիեզերակալի գէմ: Յետոյ զեղխութեամբ շուայտելով՝ ախտաւորութեան  
տուաւ ինք զինքը բոլորովին, և գաշնադիր ըլլալով Դուռնայ սցլազիր Ամերային  
հնտ, հրաւիրեց զայն 'ի Շիրակ, յաւեր և յապականութիւն երկրին:

1. Այս անունն իսկ առաջնոյն պէս անծանօթ է մեզ. ուստի կամ ըլլալու է  
ամիրայն Դուռնայ Ավո-Համոյ, կամ ամիրայն Գողթան՝ Ապուտորչի, և կամ  
Ասրպատականի արշաւադիր բռնականերէն մին, զոր Գրիգոր յայնժամու սովո-  
րութեան համաձայն ամիրայ և վարդ Թարգմանած է: ինձ Կ'երեի, թէ անուամբ  
շատերուն անծանօթ այս բռնակալս, իր մարդափոշոց գործերովն ամենուն ծա-  
նօթ պէսք է որ եղած ըլլար Ճ գարուն. մանաւանդ թէ նոյն ամիրայն ըլլալու  
է, որ Մուշեղայ թելաղրութեամբ, յամին 984, թափեցաւ 'ի Շիրակ, և հրով  
այրեց Հռոմուսի վանկը: Ասողիկ, — Գ. 13, — Ապուտուփայ գործած կոտո-  
րածին հետո՝ հայազգի ինկողներուն վերայ ուրիշ բան մ'ալ կը պատմէ, զոր ինձ  
լոել միայն արժան է:

2. Գրիգորի այս խօսքերէն Կ'երեի, թէ Կճաւայ վանահայրը, բանիւ կամ  
գրով դէմ խօսած էր Անանիայ Նարեկացւոյն և մէկ կողմէն համարձակութիւն  
տուած էր Թօնրակեցւոց, միւս կողմէն ալ գոյթակղեցուցած էր ովամիտներէն  
զումանս: Այս բանէս, այսինքն է Կճաւայ վանահօր՝ Անանիայ Նարեկացւոյ դէմ  
ցուցուցած հակառակութենէն, — եթէ ստոյգ է, — կարելի է հետևնել, թէ  
կամ Ժ գարուն Կճաւայ և Նարեկայ վանքերն իրարու նախանձընդդէմ զիրքի  
մէջ էին, և կամ այն վանահայրն ստուգիւ իր միաբանաւթեան մէջ ևս տարածել  
կ'ուցէր Թօնրակեան աղանդը:

3. Թօնրակեցիները կ'ակնարկէ այս տեղ, յայտնի է, և ոչ թէ յիշեալ վանքի  
հասարակութիւնը:

4. Այս պայծառ վարդապետութենէն յայտնապէս կը տեսնուի, թէ Գրիգորի

» զԱստուած միացեալ 'ի մարմնի ընդունիմք և ճաշակեմք, զոր  
» Սմբատ՝ հասարակաց կերակուր՝ զսարսափելին վարդապե-  
» տաց : Եւ զծնունդն հոգեոր երկանցն՝ որ 'ի ջրոյ և Հոգւոյ,  
» ծանուցեալ, թէ որդիս Աստուծոյ գործէ, ջուր ինչ լուալեաց  
» զնոյն նոցին ուսոյց :

» Եւ զաւրհնարանեալ զաւր կիւրակէին, յորում արար  
» (Բանն Աստուած) զլոյսն առաջին, և կտարեաց զլոյսն՝ յա-  
» րութեան իւրոյ 'ի նմին. և զլոյսն կենարար գալստեանն՝ նո-  
» վաւ տնօրինեաց, զայն պատկեր՝ պաշտելի աւուր՝ ընդ այլոցն  
» զուգաթուեալ նոցին թարգմանեաց : Ալրդ՝ զորս յայսցանէ  
» զնոցա գիտեմք խափանեալս : ոչ առաքելական կամ աստուա-

հետ՝ Հայաստանեայց եկեղեցին իսկ կ'ընդունէր, — լուելեայն, — թէ մէկ տե-  
սակաւ, այսինքն է որբագործեալ հացիւ, — որ ոչ ևս է հաց, — հաղորդուող-  
ներն իսկ հաւասարապէս զնոյն ինքն զԱստուած մարմացեալ և կենդանի կ'ըն-  
դունին. և կը յանդիմանուի անոնց տկարամտութիւնը, որք ծիսականը՝ վաւերա-  
կանին հետ շփոթելով, կամ լաւ ևս վաւերականութիւնը՝ ծիսին զգհելով, կը  
կարծեն միամմամբ, թէ հացի տեսակաւ հաղորդուուները՝ զուրկ կը մնան յա-  
րենէն Գրիստոսի : Եւ Հայաստանեայց եկեղեցւոյն ըսինք, որովհետեւ եթէ այս  
վարդապետութիւնս իրօք իրենը շըլլար, ոչ Ա. Գրիգոր պիտի իշմէր վարդապե-  
տել, և ոչ այ եկեղեցին պիտի լուէր ներողամուութեամբ :

1. Թէպէտ և այսպէս ընդօրինակուած է, բայց ուղիղը, վարդապետեաց  
պիտի ըլլայ:

2. Այս ընթերցուածս կարելի էր ուղղել, յոյս յարութեան, որովհետև Գրիս-  
տոսի յարութիւնը մերինին յոյս և նախատիպ օրինակ եղաւ, և ոչ թէ լցոս սա-  
կայն հետևեալ նախագասութենէն կը տեսնուի, թէ Գրիգոր տարրեր մաքով  
« լոյս » գրած է. այսինքն է Ա. Վարդապետոս կը համարի, թէ յաւուր կիւրակէի  
եղած ըլլայ առաջնաստեղծ լցոյն կամ առաջին արարչագործութիւնը. կիւրակէի  
կատարուած ըլլայ լցոյն յարութեան, կամ լաւ ևս երկրորդ արարչագործութիւն  
մեռեալ ընութեանս . կիւրակէի պիտի լինի նաև Վրիստոսի գալստեան կենսարեր  
լցոյսը, զոր յարութեան լուսովը տնօրինեց, կամ լաւ ևս պատրաստեց մակա-  
նացու մարգկութեան համար, Դիտելու ենք, որ առաջին կէտի նկատմամբ Գրի-  
գոր կը թուի տարածացնիլ միւս վարդապետութէն, որոնք Ա. Ծգոստինոսի հետ՝  
շարաթը կամ կիւրակէն՝ օր հանգստեան կը համարին, և ոչ թէ արարչագոր-  
ծութեան, Ռւստի Գրիգոր կամ այլ ինչ կ'ուզէ հասկցնել անով, և կամ ըստ  
երրայականին կը վարէ զայն :

3. Այս բառովս կամ կանոն կը հասկնայ, և կամ քանորդն աւուր եօթնեկի  
ամսոյ:

4. Այսինքն, ուսոյց կամ վարդապետեց իրեններուն, շարն Սմբատ :

5. Այսինքն է, թօնրակեցիք կիւրակէին հետ՝ անօր խորհրդաւոր նշանակու-  
թիւններն այ կ'ուզէին խափանել, պատճառելով, թէ այն բաները ոչ առաքելոցմէ  
օրինագրուած են, և ոչ իսկ յԱստուծոյ :

» ծականս : Զօնրադրութեան խորհրդական պաղատանս<sup>1</sup>, զոր  
 » ինքն արարին ամենայնի (Յիսուս Քրիստոս) խոնարհեալ կըրկ-  
 » նեաց : Թէ զարագանն՝ ուրացեալ 'ի նոցանէ, յորում ինքն  
 » Քրիստոս մկրտեցաւ : Թէ զՀազորդութիւն<sup>2</sup> անմահութեան,  
 » զոր ինքն Տէրն բոլորից ճաշակեաց : Թէ զմծնէական ան-  
 » խտիր պղծութիւնն, զոր Տէրն զհայեցուածն արգիլեալ խոտեաց:  
 » Թէ զնշանն երկրպագեալ, զոր Աստուածն մարդացեալ՝ յուն  
 » իւր բարձեալ կրեաց, իրը զփառս ինքեան և զիշխանութիւն:  
 » Թէ զմարդապաշտ ուրացութիւնն, որ գարշելի է և անի-  
 » ծեալ քան զկուապաշտութիւն : Թէ զինքածեռն քամահանաց<sup>3</sup>  
 » քահանայութիւնն, որ սատանայի է նմանութիւն : Թէ զպսա-  
 » կին ամուսնութեան անդուսնութիւնն, զոր Տէրն ինքեան<sup>4</sup> պան-  
 » չելեաւք, և մարրն իւրով Աստուածնաւ յարգեաց և պա-  
 » տուեաց, զպսակն անդուսնեն, և զոր սիրով մերձենան առ

1. Այս տեղ «պահատանք» բառով՝ կամ ընդհանուր, և կամ մանաւանդ տէ-  
 րունական աղօթքն «Հայր մերը կը հասկնայ հեղինակս»:

2. Այնքն է Մկրտութեան խորհուրդը, զոր անկարօտն մաքրութեան Քրիս-  
 տոս ընդունեցաւ և ուսոյց կատարել :

3. Դիտելու ենք, որ այս տեղ ուղարկի վերին Ըներեաց վերայ է Գրիգորի  
 խօսքը, և ոչ թէ ընդհանուր կերպով Հազորդութեան վերայ, զոր արդէն յառա-  
 ջագոյն մէջ բերաւ : Սմբատ մերժելով Քրիստոսի Ընթրեաց հաստատութիւնը,  
 մերժած էր նոյնպէս ոչ միայն Տեառն մերոյ կենարար մարմնոյ և արեան Հա-  
 զրդութեան նշարտութիւնն, այլ և Հայաստանեաց եկեղեցւոյ տօներէն հնա-  
 գոյնն և նուրիսկաննը, զոր այնքան շքով և պատուով կը կատարէին Այս պատ-  
 ճառաւ ուրեմն Գրիգոր մեծ կարևորութիւն տալով, առանձին յիշատակած է  
 զաննք, իրեւ կրկնակի և կարևոր նիւթեր՝ Սմբատայ ուրացութեան :

4. Գրիգորի այս տեղին շնչակցուելու շափ մութ է . սակայն ինձ այնպէս կը  
 թուի, թէ ըսել կ'ուզէ (Ամբատայ համար) ուրանալով Քրիստոսի աստուածու-  
 թիւնն, իրեւ լոկ մարդ կը դաւանի զնա . և կամ ինք զինքը պաշտելի ընելու  
 համար՝ կ'ուրանայ Քրիստոսի աստուածութիւնը :

5. Այս բացաստութեամբս կ'ակնարկէ աղանդապետին այն յանդուգն ձեռնե-  
 րիցութիւնն, որով ինքը, — թէ և սոսկ աշխարհական մ'էր, — բայց արհամար-  
 հելու համար զիսրհուրդն Քահանայութեան, ձեռնադրութիւններ կ'ընէր :

6. Այս տեղ՝ կանայ Գայլիեացւոց հարսանիքը կը յիշեցնէ, զոր պատուելու  
 համար հօն գտնուեցաւ Յիսուս իր մօրը հետ, և պանչելեաք զնարն 'ի զինի փո-  
 խարկեց :

7. Այս նախադասութեամբս, — դիտելու ենք, — որ Գրիգոր ուզած է թուն-  
 րակեցւոց այն մոլորութիւնը մէջ բերել, որով կ'ուրանային Պատակի խորհրդական  
 մասն, և իրը բնական դաշնաք մի կը համարէին զայն : Եւ որ շարագոյն է, այդ  
 դաշնաքն իսկ՝ ամէն առն և կնոջ համար և ամէն պարագայից մէջ սրինաւոր և  
 վաւերական կը համարուէր, բաւական էր, որ անոնք բնական յօժարութիւն ու-

» յիրեարս, կատարեալ սէր համարին և յԱստուծոյ, և հաճոյ  
» Քրիստոսի, թէ Աստուած սէր է, և զսիրով միաւորիլն կամի  
» և ոչ զպսակ: Թէ զերախայրեացն կատակերգական: երգի-  
» ծանութիւնն, զորս Աքէլ և նոյ, և Աբրահամ և Դաւիթ, և  
» Սողոմոն և Եղիայ աստուածային բարկութեան ցուցին հաշ-  
» տարարութիւն: Թէ որ զգլխաւոր՝ աղանդին իւրեանց գար-  
» շութեան (զգլութիւն) յա՛ դգնեալ Քրիստոս անուանեն, զոր Քրի-  
» ստոս կանխաւ վկայեաց, թէ Յարիցեն սուտ մարգարէք. և այս  
» է ասելն մարգարէին, թէ Խորհեցաւ անզգամն 'ի սրտի իւրում:  
» թէ ոչ իցէ Աստուած:

Նենային իրարու հետ միանալու, թէ և այդ յօժարութիւնը առանց զաւակասե-  
րութեան նպատակի, այլ պարզ հեշտութեան համար ըլլար:

1. Տեղիս ուղղակի ակնարկութիւն է Թոնրակեցւոց այն մոլորութեան, որով  
կը ծաղրէին, — այս և այլ ծաղրապատկերներով և անհեթեթ պատմութիւննե-  
րով, — քրիստոնէից՝ Աստուծոյ կամ անոր պաշտօնէից ձօնած նուէրները,  
տասանորդներն և պողիները:

2. Խնչակը կանխաւ ըսինք, Թոնրակեցիք իրենց գլխաւոր աղանդապետքը  
Քրիստոսի տեղ կը պաշտէին. Բայց Սմբատ առաջինն եղաւ, որ կամ բռնի և  
կամ իր ըրած կախարդութիւններովն ինքինքն իրեւ Քրիստոս երկրպագել տուաւ  
իր հետևողներուն, և այս է Գրիգորի ակնարկածը:

Շարունակելի

